**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5**
**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի**
**2024թ. դեկտեմբերի 17-ի նիստի**

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 24-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը:

Քվորումը ստուգելուց առաջ, խորհրդի նախագահի առաջարկով, խորհրդի անդամները նախ շնորհավորեցին Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գրիգոր Հայրապետյանին՝ ծննդյան կապակցությամբ, հետո «Կառավարում» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող, գիտխորհրդի անդամ Բենիկ Բալայանին՝ ֆակուլտետի ՈւԽ նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ: Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց ՈւԽ նախկին նախագահ, «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Վերգինե Դանիելյանին վերջին երեք տարիներին ուսանողական խորհրդի աշխատանքների արդյունավետ և համակարգված կազմակերպման համար:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

## ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի դեկանի 2023-24 ուստարվա հաշվետվության մասին
2. ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2025» դրամաշնորհային մրցույթին հայտերի երաշխավորման մասին
3. Ընթացիկ հարցեր

**1. ԼՍԵՑԻՆ.** Ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի 2023-24 ուստարվա հաշվետվությունը:

**1. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ ամփոփ ներկայացնելով ֆակուլտետի գործունեությունը 2023-24 ուսումնական տարում: Նախ՝ հաշվետվության առաջին մասում, ներկայացրեց արձանագրված ձեռքբերումներն ու

հաջողությունները հետևյալ ուղղություններով. 1) դիմորդների մասնագիտական կողմնորոշում և ընդունելություն 2) կրթական ծրագրեր, 3) ուսանողների հաջողություններ, 4) կրթության երրորդ աստիճան, 5) ակադեմիական համակազմի նկարագիր և կարողությունների զարգացում, 6) գիտահետազոտական գործունեություն և մասնակցություն ֆինանսավորվող գիտական նախագծերին, 7) գործընկերների հետ համագործակցություն, 8) շրջանավարտներ, 9) ենթակառուցվածքներ և պայմաններ:

1) Հաշվետու ուստարում ֆակուլտետը ձեռնամուխ է եղել Դիմորդների հետ տարվող աշխատանքային խմբի ստեղծմանը և մի շարք ավագ դպրոցների աշակերտների համար կազմակերպել է շուրջ 20 տեղեկատվական հանդիպումներ, որոնց մասնակցել են շուրջ 500 աշակերտներ: 2023-2024 ուստարում դիմորդների հետ տարվող աշխատանքների շրջանակներում ֆակուլտետը կազմակերպել է «ԵՊՀ Տնտեսագիտական դպրոց» երկօրյա ծրագիրը, որին մասնակցել են Երևան քաղաքի և մարզերի տարբեր ավագ դպրոցների շուրջ 150 աշակերտներ:

2) 2023-24 ուստարում ֆակուլտետի կրթական ծրագրերում տեղի են ունեցել հիմնարար բարեփոխումներ. մշակվել է «Մաթեմատիկական տնտեսագիտություն և տվյալագիտություն» բակալավրի նոր կրթական ծրագիրը, լրամշակվել և ներկայացվել է «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագիրը 1.5 տարի տևողությամբ, Էրազմուս+ T-Green ծրագրի շրջանակում մշակվում է կրկնակի դիպլոմով «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիրը, «Ստարտափ Արմենիա» գիտակրթական հիմնադրամի հետ կնքված հուշագրի շրջանակում մշակվում է «Ստարտափերի կառավարում» մագիստրոսական ծրագիրը, մշակվել և ներդրվել է 1 տարի ուսման տևողությամբ «Ֆինանսներ» մագիստրոսական նոր կրթական ծրագիրը:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետը տարբեր հանդիպումներ է նախաձեռնել տնտեսության ամենատարբեր հատվածների կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ գնահատելու պոտենցիալ աշխատակցին ներկայացվող պահանջները և գիտելիքի ու հմտությունների շրջանակը:

3) Հաշվետու տարում ֆակուլտետում առկա և հեռակա կրթաձևերի ինչպես բակալավրի, այնպես էլ մագիստրատուրայի բոլոր կրթական ծրագրերում ուսանողների ՄՈԳ-երի միջին ցուցանիշները 2022-23 ուստարվա նկատմամբ աճել են: Ֆակուլտետի 6 ուսանողներ գիտական զեկուցումներով հանդես են եկել գիտաժողովներում, 1-3-րդ կուրսի ուսանողները հրատարակել են թվով 7 գիտական հոդվածներ ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական ամսագրերում, 4 ուսանողներ մասնակցել են Թուրքմենստանի տնտեսագիտության և կառավարման պետական ինստիտուտի կազմակերպած «Համաշխարհային տնտեսություն» միջազգային հեռավար օլիմպիադային: Արդյունքում նրանցից 2-ը զբաղեցրել են 1-ին, 2-ը՝ 2-րդ տեղ: 3-րդ կուրսի ուսանող Լիանա Խաչատրյանը

մասնակցել է Արաբական Միացյալ Էմիրություններում կայացած «Seaside Startup Summit» միջազգային բիզնես ֆորումին:

2023-24 ուստարում «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ֆակուլտետի բարձր առաջադիմություն ցուցաբերած 10 ուսանողի տրամադրվել է միանվագ կրթաթոշակ, յուրաքանչյուրը՝ 1 մլն դրամի չափով: 2023-24 ուստարում Ֆիլիպ Կոտլերի կողմից կազմակերպված «Գաղափարներ կրիտիկական ժամանակների համար. նոր համաշխարհային շուկայավարման կարգը» թեմայով էլեկտրոնային շուկայավարման համաշխարհային գագաթաժողովին ֆակուլտետից առցանց ձևաչափով մասնակցել են շուրջ 100 ուսանողներ:

4) Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ 2023-24 ուստարում ընդունվել է 1 ասպիրանտ, թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել 3 ասպիրանտ և 1 հայցորդ:

5) Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում հաշվետու ուստարում աշխատել են 52 հիմնական, 22 համատեղությամբ և 53 ժամավճարային հիմունքներով պրոֆեսորադասախոսական կազմի անդամներ, որոնցից 15-ը՝ պրոֆեսորներ, 52-ը՝ դոցենտներ, 37-ը՝ ասիստենտներ և 23-ը՝ դասախոսներ: Պրոֆեսորադասախոսական կազմն ըստ տարիքային խմբի հետևյալն է. 127 աշխատակցից՝ 31-ը «մինչև 35 տարեկան» խմբում է, 71-ը՝ «36-63 տարեկան» խմբում, 25-ը՝ «64 և ավելի տարեկան» խմբում, իսկ ըստ սեռային կառուցվածքի՝ 48%-ը արական, 52%-ը իգական:

Ֆակուլտետում մշակվել և 2023-24 ուստարում արդեն կիրառվել է դասախոսների կատարած աշխատանքների գնահատման համակարգը: Մասնավորապես, յուրաքանչյուր դասախոսի համար հաշվարկվել է գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշը (KPI): Ֆակուլտետում հրապարակվել է 89 գիտական հոդված, ազդեցության գործակցով՝ 13, մենագրություն՝ 5, ուսումնական ձեռնարկ՝ 6: Հաշվետու տարում խնդիր էր դրվել՝ կտրուկ բարելավել Scopus և Web of science գիտաչափական շտեմարաններում գիտական հոդվածների հրապարակման ցուցանիշը, ինչն ըստ էության ֆակուլտետին հաջողվել է, քանի որ 2022-23 ուստարում նշված շտեմարաններում ոչ մի գիտական հոդված չի տպագրվել, իսկ հաշվետու ժամանակահատվածում տպագրվել է 12-ը:

2023-24 ուստարում ֆակուլտետի 22 դասախոս վերապատրաստվել է ԵՊՀ Շարունակական կրթության բաժնի կողմից կազմակերպված դասընթացներում, 3-ը՝ ՌԴ բուհերում, 1-ը՝ Նիդերլանդներում, 3-ը՝ ՀՀ տարբեր կազմակերպություններում, 30 դասախոս մասնակցել է միջազգային տարբեր գիտաժողովների:

6) Հաշվետու տարում, ֆակուլտետում գիտության բազային ֆինանսավորման բացակայության պայմաններում, գիտահետազոտական գործունեության և ֆինանսավորվող գիտական նախագծերին մասնակցության ամփոփ արդյունքների համաձայն, ֆակուլտետից ընդհանուր առմամբ ներկայացված դրամաշնորհային հայտերի

քանակը կազմել է 19, որից հաղթող է ճանաչվել 5 դրամաշնորհային հայտ, իսկ ներկայացված հայտերից 8-ը գտնվում է փորձաքննության փուլում: ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր 2024» մրցույթում ֆակուլտետից հաղթող է ճանաչվել և ֆինանսավորման է երաշխավորվել 2 գիտական թեմա: Ֆակուլտետի գիտնականները մասնակցել են տարբեր միջազգային գիտաժողովների: Ֆակուլտետում կազմակերպվել է թվով 9 գիտական սեմինար:

2023-24 ուստարում իրականացվել են ֆակուլտետի 90-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների շարքի նախապատրաստական աշխատանքներ: 2024 թ. հոկտեմբերի 8-10-ը ֆակուլտետում տեղի ունեցավ «Փոխակերպվող տնտեսություն. թվային տեխնոլոգիա, տարածական անհամամասնություններ և կյանքի որակ» խորագրով միջազգային գիտաժողովը՝ նվիրված ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակին, որին մասնակցել են 22 երկրներից ժամանած շուրջ 40 անվանի ու աշխարհահռչակ գիտնականներ, զեկուցումների ընդհանուր քանակը կազմել է շուրջ 80:

7) Գործընկերների հետ համագործակցության արդյունքում հաշվետու տարում օտարերկրյա 7 գործընկերներ դասախոսություններով հանդես են եկել ֆակուլտետում, 1 ուսանող մեկ կիսամյակով ուսումնառել է Գերմանիայի Լյուդվիգսհաֆեն համալսարանում՝ ուսանողների շարժունության շրջանակներում, ֆակուլտետը կնքել է 5 համագործակցության հուշագրեր տեղական գործընկերների հետ, ֆակուլտետը կազմակերպել է ուսանողների թվով 26 այցելություններ տարբեր կազմակերպություններ, ֆակուլտետում կազմակերպվել են նաև թվով 20 վարպետության դասեր:

8) 2023-2024 ուստարում ֆակուլտետում կազմավորվել է շրջանավարտների հետ տարվող աշխատանքների հարցերով աշխատանքային խումբ, որը համակարգել է ֆակուլտետի վերջին 40 տարվա շրջանավարտների հետ տարվող աշխատանքները և ակտիվորեն համագործակցել ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի հետ:

9) 2023-24 ուստարում ֆակուլտետը համալրվել է խելացի գրատախտակներով հագեցած ինտերակտիվ լսարաններով: Ֆակուլտետի որոշ լսարաններում և ամբիոնների վարիչների սենյակներում տեղադրվել են օդորակիչներ իրենց պաշտպանիչ էկրաններով: Կարևոր ձեռքբերում է ԵՊՀ ՏՏ վարչության կողմից ֆակուլտետի ամբողջ տարածքը ինտերնետի wifi կապով, ինչպես նաև լսարաններում տեղադրված բոլոր խելացի գրատախտակները ինտերնետ հասանելիությամբ ապահովելը: Հաշվետու տարում ակտիվ շինարարական աշխատանքներ են սկսվել Wolfram մաթեմատիկական ծրագրավորման լեզվի ուսուցման լաբորատորիայի համար նախատեսված լսարանում, որը կհանձնվի շահագործման 2024-25 ուստարում:

Ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հաշվետվության երկրորդ մասում, ներկայացրեց հետագա անելիքները՝ ըստ ֆակուլտետի ռազմավարական զարգացման առաջնահերթությունների.

ա) Խթանել ֆակուլտետում գիտահետազոտական աշխատանքների կատարումը տարբեր գիտական դրամաշնորհներին հայտեր ներկայացնելու միջոցով։

բ) Ֆակուլտետի միջազգային կապերի ակտիվացման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական ներուժի զարգացման նպատակով խրախուսել դասախոսների արտասահմանյան գործուղումները՝ շարժունության ծրագրերի, գիտաժողովների մասնակցության կամ վերապատրաստման ծրագրերի միջոցով։

գ) Գործատուների և բիզնեսի հետ կապի ամրապնդման նպատակով առավել աշխուժացնել վարպետության դասերի, կազմակերպություններ այցերի, ինչպես նաև գործատուների հետ պարբերաբար հանդիպումների և քննարկումների գործընթացը։

դ) Շրջանավարտների հետ տարվող աշխատանքների ակտիվացման առումով ստեղծել Շրջանավարտների ասոցիացիա և շրջանավարտներին առավելագույնս ներգրավել ֆակուլտետի զարգացման ծրագրերում։

ե) Դիմորդների հետ տարվող աշխատանքների ակտիվացման առումով ավելացնել ֆակուլտետում և դպրոցներում կազմակերպվող հանդիպումների քանակը, ինչպես նաև նախաձեռնել այլ բնույթի միջոցառումներ՝ դասընթացներ, օլիմպիադաներ, մրցույթներ։ Տարեկան երկու անգամ կազմակերպել «ԵՊՀ Տնտեսագիտական դպրոց» երկօրյա ծրագիրը։

զ) Ուսանողական առօրյան առավել բովանդակալից դարձնելու նպատակով խթանել ուսանողական կառույցների նախաձեռնությունները, հատկապես քայլեր ձեռնարկել գիտական հակումներ ունեցող ուսանողներին բացահայտելու և խրախուսելու ուղղությամբ։

է) Արդյունավետ գիտակրթական միջավայր ձևավորելու նպատակով՝ ֆակուլտետի բոլոր լսարանները կահավորել էլեկտրոնային գրատախտակներով, իսկ լսարանների մեծ մասը՝ օդորակիչներով։

**2.** Տ.գ.թ. դոցենտ Գ.Հայրապետյանը, տ.գ.դ. պրոֆեսոր Գ.Վարդանյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը հարցեր հնչեցրեցին: Հարցադրումներն առնչվում էին հաշվետու տարում 2022-23 ուստարվա նկատմամբ ուսանողների ՄՈԳ-երի միջին ցուցանիշների աճի հիմնավորմանը, վարպետության դասերի կազմակերպման և կազմակերպություններ այցելությունների իրականացման կանոնակարգմանը, ֆակուլտետի երիտասարդացմանը։

**3.** Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հակիրճ պատասխանեց բարձրացված բոլոր հարցերին: Ուսանողների ՄՈԳ-երի միջին ցուցանիշների աճի հիմնավորման համար որպես փաստարկ նշեց, որ արդեն 3-րդ տարին է, որ անցողիկ շեմը 8 միավորից դարձել է 10, այդուհանդերձ անցողիկ շեմի բարձրացումը չի հանգեցրել ՄՈԳ-երի միջին

ցուցանիշի աճի, այլապես նախորդ 2 տարում ևս նման միտում կարձանագրվեր, մինչդեռ հակառակ պատկերն ունենք: Միաժամանակ շեշտեց, որ բարձր շեմի հաղթահարման դժվարությամբ պայմանավորված աճել է ուսանողների հոսունությունը, 2023-24 ուստարում ակադեմիական անբավարար առաջադիմության պատճառով ֆակուլտետից ազատվել է 131 ուսանող, ևս 13-ը՝ անհարգելի բացակայության և կարգապահության խախտման պատճառով: Հարցի կարևորությունը հաշվի առնելով, դեկանի տեղակալ տ.գ.թ., դոցենտ Ն.Միրզոյանին հանձնարարեց առաջիկա գիտխորհրդի նիստում հաշվետվությամբ ներկայացնել առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում առաջադիմության ամփոփ վերլուծության հիմնավորումները:

Վարպետության դասերի կազմակերպման և կազմակերպություններ այցելությունների իրականացման կանոնակարգման հարցին անդրադառնալով նշեց, որ հաշվետու տարում այս խնդիրն ուշադրության կենտրոնում է եղել, քանի որ նշված գործընթացների կազմակերպումն ու իրականացումը ինքնանպատակ չէ, և առաջին հերթին ուղղված է բուն ուսումնառության գործընթացի արդյունավետության բարձրացմանը, կրթական վերջնարդյունքների ապահովմանը, նաև բուհ-աշխատաշուկա կապի ամրապնդմանը: Հավելեց, որ այս ուղղությամբ տարվող աշխատանքները բարելավման կարիք ունեն:

Ֆակուլտետի երիտասարդացման հարցը մտահոգիչ որակելով նշեց, որ բոլոր քայլերը, որոնք այսօր ֆակուլտետը փորձում է իրականացնել միահամուռ ուժերով, միտված են որպես կրթօջախ և որպես գիտահետազոտական կենտրոն ֆակուլտետի համբավի բարձրացմանը, ինչը լավագույն գրավականը կդառնա ֆակուլտետի երիտասարդացման և հզորացման գործում:

Այլ հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

**1. ՈՐՈՇԵՑԻՆ.** Ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի 2023-24 ուստարվա հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

**2. ԼՍԵՑԻՆ.** ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2025» դրամաշնորհային մրցույթին հայտերի երաշխավորման մասին հարցը:

**2.1.** «Կանաչ ձեռնարկատիրության էկոհամակարգային կառավարումը ՀՀ-ում» գիտական թեմայով հայտի երաշխավորում (թեմայի արտասահմանյան ղեկավարներ՝ տնտեսագիտության թեկնածու Մարկո Սավաստանո (Իտալիա), տնտեսագիտության թեկնածու Անի Մելքոնյան-Գոտշալք (Գերմանիա),

հայաստանյան համաղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Նարինե Միրզոյան):

**2.2.** «Կանաչ թռիչք ՀՀ տնտեսության համար. կլիմայական ռիսկերի վերլուծություն և կարգավորված անցում դեպի կայուն ֆինանսներ» գիտական թեմայով հայտի երաշխավորում (թեմայի արտասահմանյան ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Լիլիթ Պոպոյան (Անգլիա), հայաստանյան համաղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ Լիանա Կարապետյան):

**2. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ գիտխորհուրդը մեկ տարի առաջ երաշխավորել է «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» դրամաշնորհային մրցույթին մասնակցության հայտեր, և որ հայտի ներկայացման պահանջները չեն փոխվել, որի համաձայն 3 փուլից բաղկացած մրցույթը հաղթահարելուց և 130 մլն դրամ ֆինանսավորում ստանալուց հետո ձևավորված 5 հոգանոց խումբը՝ որպես ստորաբաժանում ԵՊՀ կազմում, 5 տարի գործունեություն է ծավալելու թեմայի արտասահմանյան ղեկավարի և հայաստանյան համաղեկավարի անմիջական ղեկավարությամբ: Հավելեց, որ նախորդ տարի մրցույթին ներկայացված 52 հայտից ֆինանսավորվել է 13-ը, որից 5-ը ԵՊՀ հայտեր են եղել, իսկ ԵՊՀ 5 հայտերից՝ 2-ը Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետից ներկայացված հայտեր:

Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ներկայացրեց «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2025» դրամաշնորհային մրցույթին ներկայացված հայտերի հայաստանյան համաղեկավարներին՝ տ.գ.թ., դոցենտ Նարինե Միրզոյանին և տ.գ.թ., ասիստենտ Լիանա Կարապետյանին: Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ընդգծեց, որ գիտխորհրդի անդամները էլեկտրոնային ծանուցմամբ ստացել են գիտական թեմաների հակիրճ նկարագրությունները և առաջարկեց հարցուպատասխանի ձևաչափով անցնել հարցի քննարկմանը:

**2.** Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նարինե Միրզոյանի՝ որպես հայաստանյան համաղեկավար, ներկայացրած «Կանաչ ձեռնարկատիրության էկոհամակարգային կառավարումը ՀՀ-ում» գիտական թեմայով հայտի վերաբերյալ հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

**3.** Տ.գ.դ. պրոֆեսոր Վ.Բոստանջյանը առաջարկեց, որ դեկանը համակարգի դրամաշնորհային մրցույթներին հայտերի ներկայացումը՝ նոր հետազոտողներ ներգրավելու նպատակով:

**4.** Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, հնչեցված առաջարկին արձագանքելով, նշեց, որ մրցութային ծրագրին մասնակցության հայտի ներկայացումը պահանջում է համապատասխան փաթեթի պատրաստում, որի աշխատանքներն իրականացնում են

ձևավորված խմբի անդամները, համակարգում՝ թեմայի արտասահմանյան ղեկավարն ու հայաստանյան համաղեկավարը:

**5.** Ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Լիանա Կարապետյանի՝ որպես հայաստանյան համաղեկավարի, ներկայացրած «Կանաչ թռիչք ՀՀ տնտեսության համար. կլիմայական ռիսկերի վերլուծություն և կարգավորված անցում դեպի կայուն ֆինանսներ» գիտական թեմայով հայտի վերաբերյալ հարցեր հնչեցրեցին՝ տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Աբրահամյանը, ֆ.-մ.գ.թ., դոցենտ Գ.Ղուկասյանը, տեխ.գ.դ, պրոֆեսոր Ա.Առաքելյանը: Հարցադրումներն առնչվում էին գիտական թեմայի վերնագրի ձևակերպմանը, հետազոտության ուղղվածությանը, ձևավորված խմբի կազմին և անդամների ընտրությանը:

**6**. Տ.գ.թ., ասիստենտ Լիանա Կարապետյանը նախ՝ ներկայացրեց խմբի անդամներին, ընդգծեց, որ նրանցից 3-ը ԿԲ աշխատակից են, դասավանդում են ԵՊՀ-ում և ԵՊՀ ԻՄ-ում: Այնուհետև՝ հիմնավորեց գիտական թեմայի վերնագրի ձևակերպումը և ընտրությունը՝ մատնանշելով հետազոտության արդյունքների կարևորությունը ՀՀ տնտեսության համար, հավելեց նաև, որ հայտի ֆինանսավորման դեպքում խմբին աջակցելու պատրաստակամություն է հայտնել ԿԲ նախագահը:

**7.** Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփելով քննարկումը առաջարկեց՝ «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2025» դրամաշնորհային մրցույթին ներկայացված հայտերի երաշխավորման հարցը դնել փաթեթային քվեարկության:

**2. ՈՐՈՇԵՑԻՆ.**

**2.1** «Կանաչ ձեռնարկատիրության էկոհամակարգային կառավարումը ՀՀ-ում» (թեմայի արտասահմանյան ղեկավարներ՝ տնտեսագիտության թեկնածու Մարկո Սավաստանո (Իտալիա), տնտեսագիտության թեկնածու Անի Մելքոնյան-Գոտշալք (Գերմանիա), հայաստանյան համաղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Նարինե Միրզոյան) գիտական թեմայով հայտը երաշխավորել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2025» դրամաշնորհային մրցույթին մասնակցելու համար (24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

**2.2** «Կանաչ թռիչք ՀՀ տնտեսության համար. կլիմայական ռիսկերի վերլուծություն և կարգավորված անցում դեպի կայուն ֆինանսներ» (թեմայի արտասահմանյան ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Լիլիթ Պոպոյան (Անգլիա), հայաստանյան համաղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ Լիանա Կարապետյան) գիտական թեմայով հայտը երաշխավորել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2025» դրամաշնորհային մրցույթին մասնակցելու համար (23 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ):

*ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

*ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*